# ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 2023-2025ԹԹ. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

| ՀՀ | Նպատակներ/ենթանպատակներ Գործողություններ/ենթագործողություններ | | Վերջնաժամկետ | Ակնկալվող արդյունք 2023 | Ակնկալվող արդյունք 2024 | Ակնկալվող արդյունք 2025 | Առաջնային պատասխանատու | Համակատարող | Ֆինանսավորման աղբյուր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1** | Հզորացնել ՀՀ ինստիտուտների կարողությունը՝ ապատեղեկատվությունը կանխելու, հայտնաբերելու, արձագանքելու և վերլուծելու նպատակով | | | | | | | | |
| *1.1* | *Բարելավել պետական կառույցների ռազմավարական հաղորդակցությունը և հզորացնել հաղորդակցության ստորաբաժանումների մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսները* | | | | | | | | |
| 1.1.1 | Քարտեզագրել և վերլուծել հաղորդակցության ստորաբաժանումների կառուցվածքի առնչությամբ առկա իրավիճակը | 1.1.1.1 Հավաքագրել համապարփակ տեղեկատվություն պետական գերատեսչությունների հաղորդակցության ստորաբաժանումների հաստիքացուցակի, տեխնիկական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների և համալրման կարիքների վերաբերյալ։<br><br>1.1.1.2 Պատրաստել տեղեկանք հաստիքների իրական գործառույթների և պատասխանատվության շրջանակի վերաբերյալ՝ ներառելով հաստիքային աշխատանքով ծանրաբեռնվածության մասին տեղեկատվությունը և ներկայացնելով գործառույթների ու պատասխանատվությունների համընկնումները՝ քննարկումներում ներառելով տարբեր թիրախային խմբեր. | 2024 թ. | Իրականացվել է Պետական գերատեսչությունների հաղորդակցության ստորաբաժանումների հաստիքացուցակի, տեխնիկական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություն և կարիքների գնահատում՝ դրանք գնահատելով հետևյալ սանդղարկով՝<br>- համալրման խիստ անհրաժեշտութ | Հաղորդակցության ստորաբաժանումների կառուցվածքի միասնականացման արդյունավետությունը գնահատվել է։<br><br>Արդյունքների հիման վրա փոփոխություններ և ռեկոմենդացիաներ են առաջարկվել։ | Իրականացվել է հաղորդակցության ստորաբաժանումների կառուցվածքի միասնականացման արդյունավետության մոնիթորինգ և նոր մարտահրավերներով պայմանավորված համապատասխան միջնաժամկետ փոփոխությունների առաջարկում՝ մինչև համապատասխան իրավական փոփոխությունների իրականացումը։ | «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ | Պետական կառավարման մարմիններ, ՔՀԿ-ներ | Պետ. Բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնոր կազմ.ներ) |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | - փորձագետներ,<br>- ոլորտը լուսաբանող լրագրողներ,<br>- խմբագիրներ,<br>- հաղորդակցության պատասխանատուներ,<br>- հաղորդակցության ստորաբաժանման աշխատակիցներ,<br>- գերատեսչության ղեկավար կազմ: | | յուն<br>- համալրման բավարար անհրաժեշտութ յուն<br>- համալրման կարիքի բացակայությու ն<br>- ռեսուրների ավելցուկ<br><br>Վերլուծություն ների հիման վրա ստորաբաժանմ ան կառուցվածքայի ն միջնաժամկետ փոփոխություննների առաջարկում: | | | | | |
| 1.1.2 | Պետական կառույցների հաղորդակցության ստորաբաժանումն երի միասնական կառուցվածքի ձևավորում | 1.1.2.1 Քարտեզագրման և վերլուծության հիման վրա հաղորդակցության ստորաբաժանումների միասնական կառուցվածքի նախագծի ներկայացում, որը, ըստ կարիքների, պետք է համապատասխանեցվի գերատեսչություններին` հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները:<br><br>1.1.2.2 Հաղորդակցության ստորաբաժման ղեկավարի և ստորաբաժանման հաստիքների անձնագրերի | 2025 թ | Հաղորդակցությ ան ստորաբաժանո ւմների ֆինանսական և հաստիքային միասնական մոդելի մասին որոշումն ընդունվել է, ներկայացվել են բյուջետային փոփոխությունն երը 2024թ. համար: | Պետական կառավարման մարմինների հաղորդակցության բաժինների կառուցվածքը սինխրոնացվել է, հաստիքակազմը կարգավորվել է, սահմանվել են պաշտոնի անձնագրերը: | Հաղորդակցության ստորաբաժանումնե րի կառուցվածքի միասնականացման արդյունավետությու նը գնահատվել է և անհրաժեշտության դեպքում նոր զարգացումներին ադապտացվելուն ուղղված փոփոխություններ են առաջարկվել | «Հանր ային կապե րի և տեղեկ ատվու թյան կենտր ոն» ՊՈԱԿ Հանր ային կառա վարմ ան բարե | Աշխա տանք ային խումբ | Պետ. Բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մշակում:<br><br>1.1.2.3 Հաղորդակցության միասնական մոդելի ֆինանսական և հաստիքային փոփոխությունների, օրենսդրական անհրաժեշտ բարեփոխումների փաթեթի մշակում և ընդունում:<br><br>1.1.2.4 Ռազմավարական հաղորդակցության համար պատասխանատուի հաստիքի ներգրավում և անձնագրի մշակում, կամ վերոնշյալ պատասխանատվության ամրագրում ստորաբաժանումում առկա մեկ այլ հաստիքի: | | Կառավարության կից մարմինների հաղորդակցության բաժինների կառուցվածքը սինխրոնացվել է:<br><br>Հաստիքակազմը կարգավորվել է, և սահմանվել են պաշտոնի անձնագրերը:<br><br>Ստորաբաժման կառուցվածքային ad hoc փոփոխություններ են առաջարկվել՝ կապված տարբեր ճգնաժամային իրավիճակների հետ: | | | փոխումների զրասենյակ | | |
| 1.1.3 | Պետական կառույցների հաղորդակցության ստորաբաժանումների համալրում մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով | 1.1.3.1 Պետական գերատեսչությունների հաղորդակցության ստորաբաժանումների ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների քարտեզագրում:<br><br>1.1.3.2 Պետական գերատեսչությունների ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների քարտեզագրման և կարիքների գնահատման | 2025 թ | Կազմվել է պետական գերատեսչությունների հաղորդակցության ստորաբաժանումների մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով | Պետական գերատեսչությունների հաղորդակցության ստորաբաժանումների կարիքների 30%-ը բավարարվել է:<br><br>Մշակվել և ներդրվել է համապետական մակարդակով հանրային իրազեկման | Պետ. մարմինների հաղորդակցության ստորաբաժանումների կարիքների 30%-ը բավարարվել է: Իրականացվել է համապետական մակարդակով հանրային իրազեկման գործողությունների միասնական մոդելի | «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ | Պետական կառավարման մարմիններ, Հասարակական կազմակեր | Պետ. Բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնոր կազմ.ներ) |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | սանդղակի հիման վրա վերաբաշխում և/կամ համալրում՝ ըստ կարիքների գնահատման սանդղակի:<br><br>1.1.3.3 Համապետական մակարդակով հանրային իրազեկման գործողությունների կենտրոնացված համակարգի ներդրում: | | համալրման ժամանակագրությունը, ապահովվել իրավական համապատասխանությունը: | գործողությունների միասնական մոդելը և համապատասխան հաղորդակարգը: | արդյունավետության մոնիթորինգ և իրազեկման արշավների համեմատական վերլուծություն: Հանրային իրազեկման արշավների բյուջեների ներկայացում 2026թ. համար: | | պություններ | |
| 1.1.4 | Կառավարության ընդհանուր հաղորդակցության ռազմավարության և հաղորդակցության հաղորդակարգի մշակում և ընդունում | 1.1.4.1 Կառավարության ընդհանուր հաղորդակցության մշակում այդ նպատակով ստեղծված աշխատանքային խմբի շրջանակներում և ընդունում, հաղորդակարգի ներկայացում ՀՀ պետական գերատեսչությունների ներկայացուցիչներին:<br><br>1.1.4.2 Ռազմավարության կիրառման պարբերական գնահատում՝ տարին առնվազն մեկ անգամ՝ միջգերատեսչական համագործակցության հարթակի հանդիպումների միջոցով:<br><br>1.1.4.3 ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինների անձնակազմի համար սոցիալական մեդիա հարթակներում վարվելակերպի կանոնների և կիբերհարթակում | 2025 թ | Ձևավորվել է պետ. կառավարման մարմինների հաղորդակցության ոլորտի ղեկավարների միջև համագործակցության հարթակ և հաստատվել է աշխատանքի ձևաչափը: | Մշակվել և ընդունվել է Կառավարության ընդհանուր հաղորդակցության ռազմավարությունը: Պետական մարմինների հաղ. ռազմավարությունները համապատասխանեցվել են կառավարության ընդհանուր հաղ. ռազմավարությանը: Սոցիալական մեդիայի հարթակներում վարվելակերպի կանոնների և կիբերանվտանգության ուղեցույցը տեղայնացվել է գերատեսչության մակարդակով՝ ամրագրելով ուղեցույցի իրականացման | Իրականացվել է հաղորդակցության ռազմավարության և սոցիալական մեդիա հարթակներում վարվելակերպի կանոնների և կիբերանվտանգության ուղեցույցի կատարման մոնիթորինգ: Ներդրվել է անհամապատասխանության վերացման համար մեխանիզմ: | «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ | Պետական կառավարման մարմիններ<br><br>Այդ նպատակով ստեղծված աշխատանքային խումբ | Պետ. Բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնոր կազմ.ներ) |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | անվտանգության ուղեցույցի մշակում և ընդունում: | | | մոնիթորինգն իրականացող անձանց պարտականությունների շրջանակը: | | | | |
| 1.1.5 | Տարբեր իրավիճակներում հաղորդակցության հաղորդակարգերի /standard operating procedures/ մշակում և ընդունում | 1.1.5.1 Կեղծ տեղեկության տարածման մասշտաբների և դրա ռիսկերի գնահատման չափորոշիչի, ապատեղեկատվությանն արձագանքելու հաղորդակարգի և մեխանիզմի մշակում և ներդրում:<br><br>1.1.5.2 Այլ հաղորդակարգերի մշակում, որոնցում պետք է հղում կատարվի ապատեղեկատվության դեմ պայքարի հաղորդակարգին՝<br>- ստանդարտ իրավիճակներում<br>- արտակարգ իրավիճակներում<br>- արտաքին լսարանի հետ աշխատանքների համար: | 2025 թ. | Ապատեղեկատվության դեմ պայքարի, ստանդարտ և արտակարգ իրավիճակներում հաղորդակարգերը մշակված և ընդունված են, դրանք փորձարկվում են սիմուլյացիոն իրավիճակներում:<br>Հաղորդակարգերում հստակ ամրագրված են համակարգման մեխանիզմները, դերերը և պարտականությունների շրջանակը:<br><br>Պետական ապարատի կողմից կիրառվող | Արտաքին լսարանի հետ աշխատանքի հաղորդակարգը մշակված և ընդունված է:<br>Հաղորդակարգերում հստակ ամրագրված են համակարգման մեխանիզմները, դերերը և պարտականությունների շրջանակը:<br>Հաղորդակցության ստորաբաժանումներում նշանակված է մեկ պատասխանատու, ով մշտադիտարկում և արագ հայտնաբերում է ոլորտին վերաբերող կեղծ տեղեկությունը:<br>Պետական ոլորտի համար ավտոմատացված մշտադիտարկման միասնական մեխանիզմը ներդրված է: | Իրականացվել է ընդունված հաղորդակարգերի արդյունավետության գնահատում:<br>Արդյունքների հիման վրա ներկայացվել են անհրաժեշտ փոփոխություններ: | «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ | ՀՀ պետական կառավարման մարմիններ, ՀԿ-ներ | Պետ. Բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնոր կազմ.ներ) |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | տարբեր հաղորդակարգերի գնահատման մեխանիզմը ներդրված է: | | | | | |
| 1.1.6 | Մեկ կառավարություն բրենդի ներդրում | 1.1.6.1. Տարբեր գերատեսչությունների կողմից ընդունված, կիրառվող կամ մշակվող բրենդբուքերի հավաքագրում և դրանցից յուրաքանչյուրի նպատակների/թիրախների քարտեզագրում:<br><br>1.1.6.2 Աշխատանքային խմբի ձևավորում՝ կազմված պետական գերատեսչությունների ներկայացուցիչներից, մարկետոլոգներից, ովքեր պետք է ուրվագծեն Մեկ կառավարություն բրենդի կոնցեպտը և անկնալիքները:<br><br>1.1.6.3 Միասնական բրենդի մշակում և ընդունում, բրենդբուքի կիրառում ՀՀ պետական ոլորտը ներկայացնող/արտացոլող ցանկացած հաղորդակցության նյութում: | 2025 թ. | Մեկ կառավարություն բրենդի կոնցեպտի, բրենդբուքի մշակման և թիրախների/ակնկալվող արդյունքների ուրվագծման նպատակով աշխատանքային խումբը ձևավորված է, որին գործընթացի տարբեր փուլերում կարող են ներգրավել ոլորտային մասնագետներ: | Մշակվել և ընդունվել է Մեկ կառավարություն բրենդը, բրենդբուքի հիման վրա տարբեր վիզուալները: Բրենդինգը կիրառվում է պետական հաղորդակցության բոլոր միջոցներում: | Բրենդբուքի կիրառման մոնիթորինգի իրականացում: | Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն ՊՈԱԿ | Այդ նպատակով ստեղծված աշխատանքային խումբ, outsourcing | Պետ. Բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնոր կազմ.ներ) |
| 1.2 | *Բարելավել պետական կառույցների պրոակտիվ հրապարակայնությունը* | | | | | | | | |
| 1.2.1 | | 1.2.1.1 Պետ. կառավարման մարմինների պաշտոնական կայքերի քարտեզագրում՝ ներառելով ի թիվս այլնի կայքերի վերջին թարմացման, | 2025 թ. | Քարտեզագրվել են պետական կառ. մարմինների կայքերի | Պաշտոնական կայքերի 20 տոկոսը համապատասխանեցվել է միասնական ստանդարտին: | Պաշտոնական կայքերի 70 տոկոսը համապատասխանեցվել է միասնական ստանդարտին: | Հանրային | ԲՏԱՆ ԱՆ | Պետ. Բյուջե Օրենքով չարգելված այլ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Պաշտոնական կայքերի միասնական ստանդարտի բարեփոխում | կայքերը ստեղծող ընկերության և կայքերի անվտանգության ապահովման վերաբերյալ տվյալներ: 1.2.1.2 Պաշտոնական կայքերի միասնական և արդիական ստանդարտի մշակում, պաշտոնական կայքերի արտաքին տեսքի և լեզուների կիրառության, անվտանգության ապահովման միասնական ձևաչափի ներմուծում, որը պետք է համալրվի նաև կայքերի ձևավորման տիպային օրինակով՝ հաշվի առնելով առանձին ոլորտների առանձնահատկությունները: 1.2.1.3 Վերանայել գոյություն ունեցող օրենսդրական կարգավորումները, որոնք կարող ենք խոչընդոտել պաշտոնական կայքերի ստանդարտացման գործընթացը: 1.2.1.4 Պաշտոնական կայքերի անվտանգության ապահովման միասական քաղաքականության մշակում: 1.2.1.5 Կայքերի թարմացման համար պատասխանատուների պարբերական վերապատրաստումների անցկացում, այդ թվում՝ անվտանգության հարցերով: | | առանձնահատկությունները և խնդիրները՝ միասնական և արդիական ստանդարտի փաթեթում ներառելու համար: Ձևավորվել է պաշտոնական կայքերի և պաշտոնական էլ. հասցեների անվտանգության ապահովման միասնական մեխանիզմը: Մշակել են պաշտոնական կայքերի միասնական և արդիական ստանդարտը, դրա ներդրման մեխանիզմները և ժամանակացույցը: | Գերատեսչության ներսում ընդունվել են կայքի թարմացման ընթացակարգը և ժամանակացույցը,ամրագրվել է պատասխանատուները և պատասխանատվության շրջանակը: Պաշտոնական կայքերի թարմացումների համար պատասխանատուները վերապատրաստվել են՝ունենալով անհրաժեշտ նվազագույն կարողություններ. - գերատեսչության ներսում - տարին երկու անգամ - ողջ պետական համակարգով - տարին մեկ անգամ | Պաշտոնական կայքերի թարմացումների համար պատասխանատուները վերապատարստվել են՝ ունենալով անհրաժեշտ նվազագույն կարողություններ: | ծառայությունների և թվայնացման գրասենյակ Վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչություն | ԷԿԵՆԳ ՓԲԸ (համաձայնությամբ) Պետական կառավարման մարմիններ ԻԱԿ | աղբյուրներ (Միջ. դոնոր կազմ.ներ) |
| 1.2.2 | Սոցիալական մեդիա հարթակներում պաշտոնական | 1.2.2.1 Սոցիալական մեդիա հարթակներում պաշտոնական բոլոր հաշիվների | 2024 թ. | Սոցիալական մեդիա հարթակներում պաշտոնական | Սոց. մեդիա հարթակներում Մեկ կառավարություն բրենդի ամրապնդում՝ | Սոցիալական մեդիա հարթակներում | Հանրային կապերի և | ՀՀ պետական կառա | Պետ. բյուջե Օրենքով չարգելված |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հաշիվների ինստիտուցիոնալի զացում և անվտանգության ապահովում | հավաքագրում և տեղեկանքի կազմում:<br><br>1.2.2.2 Սոցիալական մեդիա հարթակներում պաշտոնական հաշիվների փոխանցումը մեկ անձից մյուսին կարգավորելու մեխանիզմի մշակում՝ ինստիտուցիոնալ հիշողությունը ապահով կերպով փոխանցելու համար:<br><br>1.2.2.3 Սոցիալական մեդիա հարթակներում պաշտոնական էջերի և ալիքների կառավարում առանձին հաշիվների միջոցով, որոնք չեն օգտագործվում այդ հարթակների կառավարման համար պատասխանատու աշխատակցի մասնավոր նպատակների համար:<br><br>1.2.2.4 Սոցիալական մեդիա հարթակներում պաշտոնական ներկայության ուղեցույցի և վարվելակերպի կանոնների մշակում և ներդրում պետական կառավարման բոլոր մարմիններում: | | բոլոր հաշիվները քարտեզագրվել են:<br><br>Մշակվել են սոցիալական մեդիա հարթակներում պաշտոնական ներկայության ուղեցույցը և վարվելակերպի կանոնները<br><br>Ընդունվել և ներդրվել է ինստիտուցիոնալ հիշողությունը ապահով կերպով փոխանցելու մեխանիզմը:<br><br>Բարեփոխվել են պաշտոնական էջերի և ալիքների կառավարման կարգերը: | տարբեր գերատեսչություններ ի հաշիվների արտաքին տեսքի մոտարկման միջոցով: Գերատեսչություններ ի սոցիալական մեդիայի հարթակների փոխաջակցության ավանդույթը ներդրվել է:<br>Սոց. մեդիա հարթակներում պաշտոնական ներկայության ուղեցույցը և վարվելակերպի կանոնները ներդրվել են պետական կառավարման բոլոր մարմիններում:<br>Սոց. մեդիա հարթակում վարվելակերպի կանոնների և ուղեցույցի հիման վրա անձնակազմի առնվազն 40% վերապատրաստվել է: | վարվելակերպի կանոնների և ուղեցույցի հիման վրա պետական գերատեսչություննե րի անձնակազմի առնվազն 40%-ը վերապատրաստվել է:<br><br>Պաշտոնական էջերի և ալիքների անվտանգությունն ապահովվում է՝ ըստ ուղեցույցի: | տեղեկ ատվու թյան կենտր ոն ՊՌԱԿ | վարմ ան մարմի ններ, ՔՀԿ-ներ | այլ աղբյուրներ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.3 | *Ներդնել պետական կառավարման մարմինների թափանցիկության և հաշվետվողականության գնահատման համակարգ* | | | | | | | | |
| 1.3.1 | Տեղեկատվության ազատության ամենամյա վիճակագրության կազմման և հրապարակման ապահովում պետական կառավարման մարմինների կողմից | 1.3.1.1 Փաստաթղթաշրջանառության էլ. համակարգերում ապահովել տեղեկություն ստանալու բանավոր և գրավոր հարցումները և դրանց պատասխաններն առանձնացնելու և դրանք որոնելու տեխնիկական հնարավորություն (ՀՀ կառավարության՝ 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N1204-Ն որոշում, փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը նախատեսող այլ իրավական ակտեր, փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ):<br>1.3.1.2 Տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության վարման միասնական ձևաչափի ընդունում:<br>1.3.1.3 Տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության և ամփոփման՝ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթի սահմանում (ՏԱ համար պատասխանատու նշանակելու վերաբերյալ իրավական ակտ, պաշտոնի անձնագիր)<br>1.3.1.4 ՏԱ վիճակագրության հրապարակում պետական | 2024 թ. | Փաստաթղթաշրջանառության էլ. համակարգերում ապահովվել է տեղեկություն ստանալու բանավոր և գրավոր հարցումները և դրանց պատասխաններն առանձնացնելու հնարավորությունը<br><br>Սահմանվել է ՏԱ հարցումների վիճակագրության վարման միասնական ձևաչափը:<br><br>Սահմանվել է ՏԱ հարցումների վիճակագրության և ամփոփման՝ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթը: | Իրականացվել է ամենամյա ՏԱ միասնական վիճակագրության ամփոփումը և ըստ սահմանված ձևաչափի՝ հրապարակումը պետական կառավարման բոլոր մարմինների պաշտոնական կայքերում | Իրականացվել է ՏԱ ամենամյա միասնական վիճակագրության ամփոփումը և ըստ սահմանված ձևաչափի՝ հրապարակումը պետական կառավարման բոլոր մարմինների պաշտոնական կայքերում | ՀՀ Վարչապետի աշխատակազմ | Ինֆորմացիայի ազատության կենտրոն | Պետ. բյուջե |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կառավարման մարմինների պաշտոնական կայքերում: | | | | | | | |
| 1.3.2 | Տեղեկատվության ազատության ինքնագնահատման համակարգի ներդրում | 1.3.2.1 Պետական կառավարման մարմինների՝ ՏԱ ինքնագնահատման մեթոդաբանության մշակում և ընդունում:<br><br>1.3.2.2 Ապահովել ՏԱ վիճակի ինքնագնահատում իրականացնելու՝ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթը (ՏԱ համար պատասխանատու նշանակելու վերաբերյալ իրավական ակտ, պաշտոնի անձնագիր և այլն)<br><br>1.3.2.3 ՏԱ պատասխանատու պաշտոնատա անձանց վերապատրաստում գնահատման մեթոդաբանության կիրառման նպատակով:<br><br>1.3.2.4 ՏԱ ամենամյա ինքնագնահատման իրականացում և արդյունքների հրապարակում պաշտոնական | 2025 թ. | Պետական կառավարման մարմինների ՏԱ ինքնագնահատման մեթոդաբանությանը մշակվել և ընդունվել է::<br><br>Մշակվել և ընդունվել է ՏԱ վիճակի ինքնագնահատում իրականացնելու՝ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթն ապահովող իրավական ակտը:<br><br>ՏԱ պատասխանատուների առնվազն 50 տոկոսը | Ընդունվել է ՏԱ վիճակի ինքնագնահատում իրականացնելու՝ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթն ապահովող իրավական ակտը Իրականացվել է ՏԱ ամենամյա ինքնագնահատման առաջին փուլը, և արդյունքները հրապարակվել են պաշտոնական կայքերում՝ ըստ հաստատված մեթոդաբանության:<br><br>ՏԱ պատասխանատուների առնվազն 100% վերապատրաստվել է գնահատման մեթոդաբանություն | Իրականացվել է ՏԱ ամենամյա ինքնագնահատման երկրորդ փուլը, և արդյունքները հրապարակվել են պաշտոնական կայքերում՝ ըստ հաստատված մեթոդաբանության: Կազմվել և հրապարակվել է պետական կառավարման մարմինների թափանցիկության վարկանիշային աղյուսակը: | ՀՀ Վարչապետի աշխատակազմ | Պետական կառավարման մարմիններ, Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն Ինֆորմացիայի ազատության կենտրոն ԹԻ Հայաստան | Պետ. Բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնոր կազմ.ներ) |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կայքերում՝ ըստ հաստատված մեթոդաբանության:<br><br>1.3.2.5 Ըստ ՏԱ ինքնագնահատման արդյունքների՝ վարկանիշային աղյուսակի ձևավորում: | | վերապատրաստվել են գնահատման մեթոդաբանությունը կիրառելու նպատակով: | ը կիրառելու նպատակով: | | | | |
| **2** | **Փոխգործակցության բարելավում և մասնավոր հատվածի մոբիլիզացիա** | | | | | | | | |
| *2.1* | *Փոխգործակցության և երկխոսության բարելավում* | | | | | | | | |
| 2.1.1 | Ձևավորել երկխոսության կայուն հարթակ մասնավոր հատվածի ներգրավմամբ և մասնակցությամբ | 2.1.1.1 Աշխատանքային խմբի ձևավորում<br>2.1.1.2 Ռեսուրսների քարտեզագրում և համագործակցության ձևաչափերի փոխհամաձայնեցում և հաստատում<br>2.1.1.3 Ռազմավարության իրականացման մշտադիտարկման մեթոդոլոգիայի մշակում և իրականացում<br>2.1.1.4 Ռազմավարական ուղղությունների հետագա զարգացում | 2025 թ. | Ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ համագործակցության հարթակները ստեղծվել են, ռեսուրսները քարտեզագրվել են, գործիքակազմը հաստատվել է: Աշխատանքային խմբի աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով առցանց հաղորդակցության հարթակը ստեղծվել և գործարկվել է: | Մշտադիտարկմամբ գնահատվել է Ռազմավարության արդյունավետություն ը և տրվել են առաջարկներ | Գնահատվել է ռազմավարության արդյունավետություն ը և նախանշվել են նոր ռազմավարական ուղղությունները | «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ | Մասնավոր հատված ՔՀԿ-ներ Ինֆորմացիայի ազատության կենտրոն | Պետ. Բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնորներ) |
| *2.2* | *Փոխգործակցություն փաստեր ստուգող հարթակների հետ* | | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.2.1 | Համագործակցություն փաստեր ստուգող հարթակների հետ | 2.2.1.1 Հայաստանում գործող փաստեր ստուգող հարթակների քարտեզագրում, նրանց հետ համագործակցության մեխանիզմների հստակեցում և կանոնավոր հետադարձ կապի հաստատում | 2024 թ | Քարտեզագրվել են Հայաստանում գործող փաստերի ստուգման հարթակները: Նախանշվել են նրանց հետ փոխգործակցության հիմնական ուղղությունները: | Ստեղծվել և ներդրվել են փաստերի ստուգման հարթակների հետ համագործակցության մեխանիզմներ: | Փաստերի ստուգման հարթակների ակտիվ առաջխաղացում | «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ | ՔՀԿ-ներ | Ֆինանսավորում չի պահանջում- |
| 2.3 | *Փոխգործակցություն մեդիայի համակարգավորման և ինքնակարգավորման խթանման նպատակով* | | | | | | | | |
| 2.3.1 | Խթանել մեդիա ինքնակարգավորումը | 2.3.1.1 Մշակել և ընդունել մեդիա ինքնակարգավորման զարգացման հայեցակարգ<br><br>2.3.1.2 Նախատեսել արտոնություններ այն մեդիաների համար, որոնք գործարկել եւ/կամ միացել են ինքնակարգավորման գործուն մեխանիզմներին | 2025 թ. | Լրագրողական համայնքի հետ համատեղ մշակվել է մեդիա ինքնակարգավորման զարգացման հայեցակարգը՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան, քննարկվել և արժանացել մասնագիտական համայնքի հավանությանը: Լրագրողական համայնքի հետ համատեղ մշակվել է ինքնակարգավորմանը միացած | Ընդունվել է մեդիա ինքնակարգավորման զարգացման հայեցակարգը:<br><br>Արտոնությունների մասին իրավական կարգավորումների առաջարկների փաթեթն ընդունվել է Կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ Ազգային ժողով ընդունման: | Արտոնությունների մասին իրավական կարգավորումների առաջարկների փաթեթն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: | ՀՀ Արդարադատության նախարարություն | ՔՀԿ-ներ | Պետ. Բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնորներ) |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մեդիաներին աջակցելու արտոնություններ ի փաթեթը: | | | | | |
| 2.3. 3 | Խթանել կարգավորող մարմնի դերը մեդիագրագիտությ ան զարգացման գործում | 2.3.3.1 Կարգավորող անկախ մարմնի (Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով) լիազորությունների շրջանակն ընդլայնել՝ ընդգրկելով մեդիագրագիտության զարգացումը որպես պարտադիր բաղադրիչ<br><br>2.3.3.2 Կարգավորող մարմնի կողմից հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում մեդիաների դերի և առաքելության, կարգավորման և ինքնակարգավորման մարմինների դերի և գործառույթների, ինչպես նաև մեդիաների իրական շահառուների թափանցիկության կարևորության և կարգավորումների վերաբերյալ:<br><br>2.3.3.3 Կարգավորող մարմնի կողմից մեդիագրագիտության զարգացման մակարդակի պարբերաբար գնահատման իրականացում (ներառյալ՝ մեդիա գրագիտության ծրագրերի արդյունքներն ու ազդեցությունը համակարգված | 2025 թ. | Համատեղ մշակվել են օրենսդրական փոփոխություննե ր Տեսալսողական մեդիայի մասին օրենքում՝ ապահովելու կարգավորող մարմնի գործառույթների անհրաժեշտ շրջանակը:<br><br>Փոփոխություննե րը քննարկվել և արժանացել են մասնագիտական համայնքի հավանությանը:<br><br>Մշակվել են կարգավորող մարմնի կողմից մշտադիտարկում իրականացնելու մեխանիզմները և գործիքակազմը:<br><br>Մշակվել և ընդունվել է կարգավորող մարմնի կողմից հանրային իրազեկման | Ընդունվել են օրենսդրական փոփոխությունները Տեսալսողական մեդիայի մասին օրենքում՝ ապահովելու կարգավորող մարմնի գործառույթների անհրաժեշտ շրջանակը:<br><br>Իրազեկման առնվազն 3 արշավ է իրականացվել կարգավորող մարմնի նախաձեռնությամբ:<br><br>Կարգավորորող մարմինն իրականացրել է կանոնավոր մշտադիտարկում և հրապարակել արդյունքները: | Կարգավորող մարմինը լիարժեք իրականացնում է օրենքով իր վրա դրված մեդիագրագիտությա ն զարգացումը խթանելու գործառույթը:<br><br>Իրազեկման առնվազն 3 արշավ է իրականացվել կարգավորող մարմնի նախաձեռնությամբ:<br><br>Կարգավորորող մարմինն իրականացրել է կանոնավոր մշտադիտարկում և հրապարակել՝ արդյունքները՝ դիտարկելով բարելավումների դինամիկան, բացահայտելով կարիքները և ռազմավարական պլանավորելով հետագա քայլերը: | Հեռուս տատե սությ ան և ռադիո յի հանձն աժողո վ | Ինֆոր մացի այի ազատ ության կենտր ոն ՀԿ ՔՀԿ-ներ | Պետ. Բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնորներ) |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գնահատելու, մարտահրավերները բացահայտելու, տարբեր դերակատարների կողմից մեդիա գրագիտության զարգացմանը նպաստող գործողությունները վերլուծելու և վերլուծություն հրապարակելու նպատակով): | | իրականացման պլանը: | | | | | |
| *2.4* | *Մասնավոր հատվածի ներգրավում և մոբիլիզացիա* | | | | | | | | |
| 2.4.1 | Մասնավոր հատվածի դերի բարձրացում և ներգրավման ապահովում | 2.4.1.1 Տեղեկատվական տեխնոլոգիական հաղորդակցության, հանրային կապերի, խորհրդատվական ոլորտում ներգրավված մասնավոր ընկերությունների կողմից ապատեղեկատվության դեմ պայքարի գործուն մեխանիզմների և նորարարական գործիքների մշակում և ֆինանսավորում<br><br>2.4.1.2 Մասնավոր հատվածի հետ կայուն համագործակցության մեխանիզմների ստեղծում և գործարկում | 2025 թ. | Մշակվել են մասնավոր հատվածի հետ կայուն համագործակցության մեխանիզմները<br><br>Հստակեցվել են Ապատեղեկատվության դեմ պայքարի (կանխարգելման, հայտնաբերման եւ չեզոքացման) նորարարական լուծումների աջակցության մեթոդաբանությունը և մեխանիզմները | Գործարկվել են մասնավոր հատվածի հետ կայուն համագործակցության մեխանիզմները<br><br>Իրականացվել է տարեկան առնվազն երեք նորարարական գաղափարի ֆինանսավորում | Աջակցություն ստացած նորարարական գաղափարները ներդրվել են պետական կառավարման համակարգում | ԲՏԱ | Պետական կառավարման մարմիններ, Մասնավոր հատված | ՀՀ Պետական բյուջե |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.4.2 | Մասնավոր հատվածի հաշվետվողականության ու թափանցիկության խթանում | 2.4.2.1 Հանրային իրազեկման արշավների կազմակերպում, որի նպատակն է իրազեկել մասնավոր հատվածին հաշվետվողականության և թափանցիկության կարևորության վերաբերյալ<br>2.4.2.2 Հաշվետու և թափանցիկ ընկերությունների խրախուսում հանրային գիտակցության մեջ | 2024 թ. | Իրականացվել է առնվազն 2 հանրային իրազեկման արշավ<br>Մշակվել են մասնավոր ընկերությունների խրախուսման մեխանիզմները և քննարկվել շահառու խմբերի մասնակցությամբ: | Իրականացվել է առնվազն 2 հանրային իրազեկման արշավ:<br><br>Ներդրվել են մասնավոր ընկերությունների խրախուսման մեխանիզմներ | | Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ | ՔՀԿ-ներ | Պետ. բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնոր կազմակերպություններ) |
| 2.4.3 | Պետություն-սոցիալական հարթակներ ուղիղ երկխոսության խողովակների ստեղծում՝ | 2.4.3.1 Սոցիալական հարթակների ալգորիթմների թափանցիկության, այս հարթակներում տեղադրվող գովազդի և հովանավորված բովանդակության (sponsored content), բովանդակության մոդերացիայի, կեղծ հաշիվների հիմնախնդիրների, սոցիալական պատասխանատվության շրջանակի շուրջ անմիջական երկխոսության մեխանիզմների ստեղծում մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության հետ ակտիվ համագործակցությամբ:<br>2.4.3.2 Օրենսդրական նախաձեռնություններ, որոնք կբարձրացնեն սոցիալական ցանցերի պատասխանատվությունը և | 2024 թ. | Պետության և սոցիալական հարթակների միջև համագործակցության ուղիղ երկխոսության մեխանիզմները մշակվել են, որոնք հնարավորություն կտան անմիջականորեն փոխազդել սոցիալական հարթակների ալգորիթմների, գովազդի և հովանավորվող բովանդակության վրա այդ հարթակներում, բովանդակությ | Պետության և սոցիալական հարթակների միջև ուղիղ երկխոսության մեխանիզմները գործարկվել են:<br><br>Նախանշվել են հետագա անելիքների հիմնական ուղղությունները: | | «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ | ՀՀ ԱԳՆ ՔՀԿ-ներ | Պետ. բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնոր կազմակերպություններ) |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հաշվետվողականությունը ՀՀ հանրության հանդեպ:<br>2.4.3.3 Մասնավոր հատվածի ներգրավում սոցիալական մեդիա հարթակներում ալգորիթմների վերաբերյալ հանրային իրազեկումը բարձրացնելու գործում | | ան մոդերատորությ ան, կեղծ հաշիվների հետ կապված խնդիրների, սոցիալական պատասխանա տվության շրջանակի վրա: | | | | | |
| 2.4.4 | Ապատեղեկատվու թյան դեմ պայքարը Հայաստան-Արցախ-Սփյուռք փոխգործակցությ ան օրակարգում | 2.4.4.1 Այս համատեքստում քննարկումների, միջոցառումների կազմակերպում:<br>2.4.4.2 Համաշխարհային հայկական զագաթաժողովների, Սփյուռքի և Արցախի հետ մասնագիտական և երիտասարդական համաժողովների ժամանակ թեմատիկ ելույթների նախատեսում, գիտահետազոտական աշխատանքների աջակցություն միջազգային հեղինակավոր գիտական կենտրոններում և համալսարաններում: | 2025 թ. | Հայաստան-Արցախ-Սփյուռք ձևաչափով քննարկումներո ւմ ներառված է ապատեղեկատ վության դեմ պայքարի հարցը որպես օրակարգային խնդիր: | Առնվազն 10 հետազոտություն է իրականացվել միջազգային հեղինակավոր գիտական կենտրոններում և համալսարաններում՝ համաձայն կնքված համագործակցության հուշագրերի | Տարեկան առնվազն 10 հետազոտություն է իրականացվել միջազգային հեղինակավոր գիտական կենտրոններում և համալսարաններու մ համաձայն կնքված համագործակցությա ն հուշագրերի | Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ | ԱԳՆ, «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ | Պետ. բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնոր կազմակերպություններ) |
| **3** | **Բարձրացնել իրազեկումը և մեդիաազատությունների ու մեդիագրագիտության վերաբերյալ կրթության մակարդակը՝ ձևավորելով ապատեղեկատվության հանդեպ հանրային դիմակայություն** | | | | | | | | |
| *3.1* | *Մեդիագրագիտության հայեցակարգի և գործողությունների պլանի մշակում և ընդունում՝ ներառական ձևաչափով* | | | | | | | | |
| 3.1.1 | Առկա իրավիճակի գնահատում և ջանքերի համակարգում | 3.1.1.1 Մեդիագրագիտության ծրագրերի համակարգման խմբի ստեղծում:<br><br>3.1.1.2 Մեդիագրագիտության կարողությունների ու | 2024 թ. | Մեդիագրագիտ ության ծրագրերի համակարգման խումբը ձևավորված է | Ապատեղեկատվությ ան դեմ պայքարի ռազմավարության գործողությունների պլանը վերանայված | | Աշխատանքային խումբ | ԿԳՄՍՆ, ՔՀԿ-ներ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնոր |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կարիքների գնահատման խորը ուսումնասիրությունների իրականացում՝ լայն հանրության, ուսուցիչների, ՆՈՒՀ մանկավարժների, գրադարանավարների, նաև սովորողների շրջանում:<br><br>3.1.1.3 Մեդիագրագիտության առկա ռեսուրսների ու ծրագրերի քարտեզագրում, բացերի/կարիքների գնահատում<br><br>3.1.1.4 Մեդիագրագիտության տարածման հայեցակարգի մշակում՝ ոլորտի բոլոր շահառուների ներգրավման միջոցով<br>3.1.1.5 Գործողությունների պլանի վերանայում և վերջնականացում՝ ըստ կարիքների գնահատման և մշակված հայեցակարգի | | Կարողությունների ու կարիքների գնահատման խորը ուսումնասիրություններն իրականացված են<br><br>Մեդիագրագիտության առկա ռեսուրսներն ու կարիքները քարտեզագրվել են<br><br>Մշակվել է մեդիագրագիտության տարածման հայեցակարգը | է՝ նոր հայեցակարգի լույսի ներքո | | | | կազմակերպություններ) |
| 3.2 | *Մեդիագրագիտության ինտեգրում կրթության ոլորտում* | | | | | | | | |
| 3.2.1 | Մեդիագրագիտության ինտեգրում հանրակրթության մեջ՝ համաձայն նոր չափորոշչի | 3.2.1.1 Չափորոշչի փորձարկման կոնտեքստում՝ մեդիագրագիտության բաղադրիչի գնահատում, խնդիրների արձանագրում և անհրաժեշտ փոփոխությունների պլանավորում:<br><br>3.2.1.2 Արդյունավետ ինտեգրման համար տարեկան 1-2 առարկայի ուղղությամբ համակարգված և խորը աշխատանք՝ ուսումնական | 2025 թ. | Հանրակրթության չափորոշչի փորձարկման կոնտեքստում՝ մեդիագրագիտության բաղադրիչի գնահատում<br><br>ՆՈՒՀ-երի ու դպրոցների զինում անհրաժեշտ | Հասարակագիտություն, հայոց լեզու, գրականություն առարկաների համար ուսումնական նյութերը մշակվել և կիրառվում են<br><br>Ինտեգրման ուղեցույցները մշակվել են ՆՈՒՀ-երի համար և կիրառվում | Եվս երկու առարկաների կամ առարկայախմբերի համար ուսումնական նյութերը մշակվել և կիրառվում են (օրինակ՝ (թվային գրագիտություն, ՏՏԵՄ առարկաներ)<br>Ինտեգրման ուղեցույցներ են մշակվել ՆՈՒՀ-երի համար և կիրառվում | ԿԶՆԱԿ ԿՏԱԿ | ԿԳՄՍՆ, ՀԿ-ներ, աշխատանքային խումբ | Պետ. բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնոր կազմակերպություններ) |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | նյութերի մշակում, ուղեցույցների պատրաստում:<br><br>3.2.1.3 Ինտեգրման ուղեցույցների, ուսումնական նյութերի մշակում նախադպրոցական հաստատությունների համար:<br><br>3.2.1.4 ՆՈՒՀ-երի ու դպրոցների զինում անհրաժեշտ սարքավորումներով՝ մեդիա սպառման և մեդիա ստեղծման համար:<br><br>3.2.1.5 ՆՈՒՀ-երում և դպրոցներում ապահով և որակյալ համացանցի ապահովում, կիբերանվտանգության ուղեցույցների և մեխանիզմների մշակում: | | սարքավորումներով՝ մեդիա սպառման և մեդիա ստեղծման համար (հաստատությունների առնվազն 30%-ը) | են (4-6 տարիքային խումբ)<br><br>ՆՈՒՀ-երն ու դպրոցները զինված են անհրաժեշտ սարքավորումներով՝ մեդիա սպառման և մեդիա ստեղծման համար (հաստատությունների ևս 30%-ը)<br><br>3ՆՈՒՀ-երի և դպրոցների համար մշակվել են կիբերանվտանգության ուղեցույցներ և մեխանիզմներ, ապահովված է անվտանգ և որակյալ համացանց (հաստատությունների առնվազն 50%-ում): | են (2-4 տարիքային խումբ)<br><br>ՆՈՒՀ մանկավարժների համար անցկացվում են մեդիագրագիտության դասընթացներ (2-4 տարիքային խմբի մանկավարժների համար)<br><br>ՆՈՒՀ-երն ու դպրոցները զինված են անհրաժեշտ սարքավորումներով՝ մեդիա սպառման և մեդիա ստեղծման համար (հաստատությունների 40%-ը, այսպիսով երեք տարում ծածկելով ամբողջ դաշտը) | | | |
| 3.2.2 | Նուհ և դպրոցի մանկավարժների կարողությունների և հմտությունների զարգացում | 3.2.2.1 Մշակել և իրականացնել ՆՈՒՀ մանկավարժների վերապատրաստման դասընթաց՝ նոր չափորոշչին համապատասխան:<br><br>3.2.2.2 Մեդիագրագիտության թեմայով վերապատրաստումները դարձնել պարտադիր՝ և ներառել պարտադիր ու կամավոր վերապատրաստումների մեջ, և առանձին խորը | 2025 թ. | ՆՈՒՀ մանկավարժների վերապատրաստման դասընթացը մշակվել է՝ նոր չափորոշչին համապատասխան:<br><br>Ուսուցիչների վերապատրաստումներում | ՆՈՒՀ մանկավարժների համար անցկացվել են մեդիագրագիտության դասընթացներ (4-6 տարիքային խմբի մանկավարժների համար)<br>Ըստ առարկաների (հասարակագիտություն, հայոց լեզու - գրականություն) մշակվել և | 2 առարկայի կամ առարկայախմբի համար (օրինակ՝ թվային գրագիտություն, ՏՏԵՄ) դասընթացները մշակվել և անցկացվում են՝ այդ առարկաների բոլոր ուսուցիչների համար: | ԿԳՄՍՆ | Աշխատանքային խումբ, ՔՀԿ-ներ (ՄՆԿ-ն ուսուցիչների վերապատրաստումների | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. Դոնոր կազմակերպություններ) |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | վերապատրաստումների հնարավորություն ստեղծել:<br><br>3.2.2.3 Խորը դասընթացներ անցկացնել ընտրված դպրոցական առարկաների ուսուցիչների համար (հասարակագիտություն, հայոց լեզու, գրականություն, թվային գրագիտություն․ . . .)<br><br>3.2.2.4 Վերանայել մանկավարժական բուհերում մեդիակրթության բաղադրիչը և համապատասխանեցնել նոր չափորոշչի պահանջներին՝ ներառելով մեդիագրագիտության տարբեր կարողություններ ու մոտեցումներ (քննադական մտածողություն, բովանդակության ստեղծում և վերլուծություն, աղբյուրների հետ աշխատանք, խոսքի ազատություն ու էթիկա, թվային անվտանգություն, փաստերի ստուգում և այլն):<br><br>3.2.2.5 ՆՈՒՀ-երի և դպրոցների աշխատակիցների համար առցանց տիրույթում էթիկայի վարքականոնի մշակում՝ աշխատակիցների ներգրավմամբ, մասնակցային մոտեցմամբ: | | մեդիագրագիտության բաղադրիչը ներառված է որպես պարտադիր մաս՝ ԿԳՄՍՆ կողմից երաշխավորված ՝մեդիագրագիտության վերապատրաստման մոդուլի հիման վրա (մոդուլը մշակել է ՄՆԿ-ն): | իրականացվել են ինտեգրմանն ուղղված խորը վերապատրաստումներ այդ առարկաների բոլոր մանկավարժների համար:<br><br>Մանկավարժական բուհերում մեդիակրթության բաղադրիչը ուսումնասիրված և հստակեցված է:<br><br>Մանկավարժների առցանց տիրույթում էթիկայի վարքականոնը մշակվել է՝ ներառական, մասնակցային մոտեցմամբ՝ ուսուցչական համայնքի կողմից, նրանց հետ քննարկումների միջոցով: | Մանկավարժական բուհերում ներդրվել են բարելավված/նոր մշակված դասընթացներ:<br><br>Մանկավարժների առցանց տիրույթում էթիկայի վարքականոնները ներդրվել են բոլոր ուսումնական հաստատություններում | | մասով, ՀԼԱ-ն ՆՈՒՀ-երի վերապատրաստումների մասով) | |
| 3.2.3 | | 3.2.3.1 Գրադարաններում մեդիակենտրոնների ստեղծման հայեցակարգի մշակում՝ հիմնվելով | | Գրադարաններում մեդիակենտրոնների ստեղծման | Գրադարաններում մեդիակենտրոնների հայեցակարգի ու ծրագրերի | Գրադարանների մեդիակենտրոնների հայեցակարգի տարածում այլ | ԿԳՄՍ | Աշխատանքային | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գրադարաններում (հանրային և դպրոցական) մեդիակենտրոննե րի հիմնում | միջազգային լավագույն փորձի, նաև տեղում կարիքների գնահատման հետազոտությունների արդյունքների վրա:<br><br>3.2.3.2 Ըստ հայեցակարգի՝ գրադարանների ապահովում անհրաժեշտ նյութերով՝ ուսումնական ծրագրեր, մեթոդաբանություն, ուղեցույցներ, սարքավորումներ, թվային և աուդիո գրքեր, ֆիլմադարան:<br><br>3. 2. 3. 3 Գրադարանավարների նոր չափորոշիչների մշակում:<br><br>3.2.3.4 Գրադարանավարների համար՝ մեդիակենտրոնների համակարգման և դասընթացների անցկացման վերապատրաստումների մշակում և իրականացում: | 2025 թ. | հայեցակարգը մշակվել և ընդունվել է:<br><br>Գրադարանավ արների նոր չափորոշիչները մշակվել և ընդունվել են:<br><br>Գրադարանավ արների վերապատրաս տումների ծրագիրը մշակվել է՝ համաձայն ընդունված հայեցակարգի և նոր չափորոշիչների : | փորձարկումն իրականացվել է ընտրված մարզում:<br><br>Տվյալ մարզի գրադարանները վերազինվել են և ապահովվել նյութերով:<br><br>Տվյալ մարզում գրադարանավարների վերապատրաստումն երի իրականացում, ապա նաև նրանց կողմից ծրագրերի ու դասընթացների իրականացում սովորողների , գրադարանի այցելուների հետ:<br><br>Փորձարկման արդյունքների գնահատում, ուսումնասիրություն, հայեցակարգի ու վերապատրաստումն երի մեջ փոփոխությունների իրականացում: | մարզերում, որ ներառում է զինում, վերապատրաստումներ և նոր ծրագրերի ներդրում: (առնվազն ևս երեքմարզում) | | խումբ , ՔՀԿ-ներ | (Միջ. Դոնոր կազմակեր պություննե ր) |
| 3.2. 4 | Մեդիագրագիտութ յան ինտեգրում բուհերում | 3.2.4.1 Մեդիագրագիտությունը դարձնել կամընտրական առարկա բոլոր ֆակուլտետների ուսանողների համար:<br><br>3.2.4.2 Խրախուսել այս ուղղությամբ հետազոտական և | 2025 թ. | Մեդիագրագիտ ության բուհական դասընթացը մշակվել և ընդունվել է | ԲՈՒՀ-երում ներդրվել են մեդիագրագիտության կամընտրական առարկաներ (առնվազն հինգ պետական բուհում): | Մեդիագրագիտությ ան կամընտրական առարկա է ներդրվել բոլոր պետական բուհերում, նաեւ առաջարկվել է մասնավոր բուհերին: | ԿԳՄՍ Ն | Աշխա տանք ային խումբ, ՔՀԿ-ներ, գիտա կան | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. Դոնոր կազմակեր |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գիտական աշխատանքները մասնավորապես մանկավարժական բուհերում: | | | Ստեղծվել են հնարավորություններ՝ մեդիագրագիտության թեմաներով գիտական աշխատանքների և ուսումնասիրությունների համար բուհերում (մասնավորապես՝ մանկավարժության, լրագրության, սոցիոլոգիայի և այլ բաժիններում ): | Տրամադրվել են դրամաշնորհներ բուհական/գիտական նախագծերի համար: | | կենտրոններ | պություններ) |
| 3.2.5 | ԲՈՒՀ-երի դասախոսների վերապատրաստումներ | 3.2.5.1 Մեդիագրագիտության վերապատրաստումներ կազմակերպել բոլոր դասախոսների համար:<br><br>3.2.5.2 Պատրաստել մասնագետներ՝ մեդիագրագիտություն դասընթացը դասավանդելու համար բոլոր բուհերում, մասնավորապես՝ մանկավարժական բուհերում:<br><br>3.2.5.3 ԲՈՒՀ-երի աշխատակիցների համար օնլայն էթիկայի վարքականոնի մշակում՝ աշխատակիցների ներգրավմամբ, ներառական մոտեցմամբ: | | Ժուռնալիստիկայի ֆակուլտետների հետ համագործակցությամբ՝ մշակվել են դասախոսների վերապատրաստման ծրագրեր:<br><br>Մշակվել և ներդրվել է հատուկ վերապատարստման ծրագիր՝ մեդիագրագիտություն առարկայի դասավանդողների համար՝ հիմնվելով ժուռնալիստիկայի/հաղորդակցության և նման ֆակուլտետներ | Բուհերի դասախոսների վերապատրաստումներ են իրականացվել առնվազն այն հինգ պետական բուհերում, որտեղ ներդրվում է մեդիագրագիտություն առարկան:<br><br>Իրականացվել են մեդիագրագիտություն կամընտրական առարկայի դասախոսների վերապատաստումներ առնվազն հինգ պետական բուհերում, որտեղ առարկան ներդրվել է:<br><br>Մանկավարժների առցանց տիրույթի էթիկայի վարքականոնի հիման վրա՝ բուհերի համար | Ներդրվել են էթիկայի վարքականոններ ԲՈՒՀ-երի անձնակազմի համար: | ԿԳՄՍՆ | Աշխատանքային խումբ ՔՀԿ-ներ | Պետ. բյուջե |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ի ռեսուրսների վրա: | վարքականոնը մշակվել է: | | | | |
| 3.3 | *Հանրակրթությունից դուրս մնացած խմբերի հետ աշխատանք* | | | | | | | | |
| 3.3.1 | Լայն հանրության շրջանում մեդիագրագիտության տարածում | 3.3.1.1 Իրազեկման արշավներ՝ թիրախավորելով տարբեր տարիքային խմբերի, այդ թվում՝ տարեցներին:<br>3.3.1.2 Մեդիագրագիտության բարձրացմանն ուղղված միջոցառումների, մրցույթների, հեքըթոնների կազմակերպում լայն հանրության համար, ինչպես օրինակ՝ «Մեդիագրագիտության շաբաթ», «Փաստերի ստուգման միջազգային օր» և նմանատիպ այլ միջոցառումներ:<br><br>3.3.1.3 Թվային ռեսուրսների համակարգում, ստեղծում և տարածում միասնական հարթակում: | 2025 թ. | Իրազեկման արշավներ են իրականացվել հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով, առնվազն մեդիագրագիտության շաբաթվա շրջանակներում:<br>Մեդիագրագիտության շաբաթվան ներգրավվել են բոլոր ուսումնական հաստատությունները:<br>Մեդիագրագիտության առկա թվային ռեսուրսները հավաքված են միասնական թվային հարթակում: | Առանձին հաղորդումներ և մեդիա բովանդակություն է մշակվել տարեցների, նաեւ ծնողների ու խնամակալների համար մեդիա դաշտի կազմակերպությունների ու լրատվամիջոցների հետ համագործակցությամբ. մասնավորապես, հանրայինը մշակել և հեռարձակել է այդպիսի հաղորդումներ<br><br>Մեդիագրագիտության ռեսուրսների միասնական հարթակը հասանելի է բոլոր ուսումնական հաստատություններին, այստեղ շարունակաբար ավելանում են նոր նյութեր: | Իրազեկման արշավներ են մշակվել և իրականացվել այլ թիրախային խմբերի համար (երեխաներ, պատանիներ, մասնավոր հատվածի, առողջապահության ոլորտի աշխատողներ և այլն)<br><br>Մեդիագրագիտության ռեսուրսների միասնական հարթակը հասանելի է բոլոր հետաքրքրված կողմերին, կառույցներին, լայն հանրությանը: | Աշխատանքային խումբ, «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ | Հանրային հեռուստատեսություն/ռադիո, հանձնաժողով, ՔՀԿ-ներ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. Դոնոր կազմակերպություններ) |
| 3.3.2 | Հանրության տարբեր խմբերի համար մեդիագրագիտության կրթություն | 3.3.2.1 Ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների ստեղծում համայնքներում՝ համագործակցելով համայնքային կազմակերպությունների, գրադարանների, | 2025 թ. | Համայնքներում մեդիագրագիտության կարիքները քարտեզագրվել են, հստակեցվել են | Համայնքային հաստատությունների մասնագետների/դասավանդողների համար մեդիագրագիտության խորացված և | Իրականացվել է Համայնքային հաստատությունների մասնագետների/դասավանդողների համար | Աշխատանքային խումբ | | Պետ.բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | թանգարանների, մշակույթի կենտրոնների հետ:<br><br>3.3.2.2 Այդ հաստատությունների մասնագետների համար վերապատրաստումների կազմակերպում մարզերում:<br>3.3.2.3 Առցանց դասընթացների ստեղծում/եղած դասընթացների տարածում:<br><br>3.3.2.4 Աշխատանք ծնողների հետ՝ սոցիալական, առողջապահական, կրթական հաստատությունների միջոցով՝ մեդիագրագիտությունը դարձնելով ծնողավարության, մայրության, խնամակալության ծրագրերի մաս:<br><br>3.3.2.5 Սփյուռքահայերի մասնակցությամբ ծրագրերում ներդնել մեդիագրագիտության բարձրացումը խթանող բաղադրիչ՝ համագործակցելով Հայաստանում գործող սփյուռքյան կազմակերպությունների հետ (օրինակ՝ «Քայլ դեպի տուն», «Սփյուռքի երիտասարդ դեսպան», «Սփյուռքի երիտասարդ առաջնորդների վերապատրաստում» ծրագրերի շրջանակներում): | | հայեցակարգից բխող անելիքները: | վերապատրաստումների կազմակերպում<br><br>Մեկնարկել են դասընթացներ/խմբակներ այդ հաստատություններում:<br>Ստեղծվել են առցանց դասընթացներ /եղած դասընթացները տարածվել են:<br><br>Ծնողների համար ստեղծվել են իրազեկման նյութեր և տարածվել, իրականացվել են դասընթացներ<br><br>Սփյուռքի մասնակցությամբ ծրագրերում ինտեգրվել են մեդիագրագիտության բաղադրիչներ | մեդիագրագիտության խորացված և վերապատրաստումների նոր փուլը:<br><br>Մեկնարկել են խմբակներ այդ հաստատություններում:<br>Ծնողների համար նյութերի տարածումն ու իրազեկումը դարձել է շարունակական և պարբերական գործընթաց՝ համապատասխան կառույցների գործառույթների մեջ ինտեգրվելով (սոցիալական ծառայություններ, պոլիկլինիկաներ, ՆՈՒՀ-եր և դպրոցներ)<br><br>Սփյուռքի մասնակցությամբ ծրագրերում ինտեգրվել են մեդիագրագիտության բաղադրիչներ: | | | |
| 3.4 | *Հանրային (այդ թվում՝ համայնքային) ծառայողների կարողությունների և հմտությունների զարգացում* | | | | | | | | |
| 3.4.1 | | 3.5.1.1 Հաղորդակցության և ապատեղեկատվության դեմ պայքարի ոլորտում պետական | 2025 թ. | Հաղորդակցության ոլորտի, ինչպես նաև | Տարվա ընթացքում առնվազն 3 թեմատիկ դասընթացի | Մշակված և ընդունված է հաղորդակցության | «Հանրային կապե | Պետական կառա | Պետ. Բյուջե |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կանոնավոր մասնագիտական վերապատրաստումներ և անձնակազմի հաղորդակցության կարողությունների զարգացում ապատեղեկատվությունը կանխելու, բացահայտելու և հակազդելու նպատակով: | կառավարման մարմինների աշխատակազմի վերապատրաստման կարիքների համապարփակ գնահատում, որը պետք է իրականացվի առնվազն երկու տարին մեկ անգամ:<br><br>3.5.1.2 Կարիքների գնահատման արդյունքների հիման վրա Հանրային կապերի և հաղորդակցության ոլորտի հանրային ծառայողների և տեղեկատվության ազատության համար պատասխանատու հանրային համար մեդիագրագիտության, փաստերի ստուգման, կիբերանվտանգության վերապատրաստումների կրթական ծրագրերի մշակում:<br><br>Ծրագիրը պետք է լինի եռամակարդակ՝<br>- գերատեսչության ղեկավար կազմ<br>- հաղորդակցության համար պատասխանատուներ<br>- գերատեսչության անձնակազմ՝ ընդհանուր դասընթացներ<br><br>3.5.1.3 Հանրային կապերի և հաղորդակցության ոլորտի և տեղեկատվության ազատության համար պատասխանատու հանրային հանրային ծառայողների համար մեդիագրագիտության, | | տեղեկատվության ազատության համար պատասխանատու հանրային ծառայողների վերապատրաստման կարիքները գնահատված են, դրա հիման վրա մշակված և ընդունված է վերապատրաստման տարեկան ծրագիրը և ժամանակացույցը:<br><br>Գնահատման արդյունքների հիման վրա մշակվել են կրթական ծրագրերը: | անցկացում (տեղական և միջազգային փորձագետների մասնակցությամբ) հանրային կապերի, Տեղեկատվության ազատության և հաղորդակցության ոլորտի հանրային ծառայողների համար (գերատեսչություններ ի անձնակազմ)՝ մեդիագրագիտության, կիբերգրագիտության, սոցիալական մեդիա հարթակներում աշխատանքի կազմակերպման վերաբերյալ:<br><br>Ըստ գերատեսչության, անհատական մասնակցության տոկոսը պետք է կազմի առնվազն 30%:<br><br>Յուրաքանչյուր դասընթացից հետո գնահատման մեխանիզմի կիրառում:<br><br>Վերապատրաստվել են (Գեղարքունիքի/Սյունիքի մարզի) | ոլորտի, ինչպես նաև տեղեկատվության ազատության համար պատասխանատու հանրային ծառայողների վերապատրաստման տարեկան ծրագիրը և ժամանակացույցը: Տարվա ընթացքում առնվազն 3 թեմատիկ դասընթացի անցկացում (տեղական և միջազգային փորձագետների մասնակցությամբ) հանրային կապերի, Տեղեկատվության ազատության և հաղորդակցության ոլորտի հանրային ծառայողների համար(գերատեսչությունների անձնակազմ)՝ մեդիագրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ: Տարվա ընթացքում պարտադիր թեմատիկ դասընթացի անցկացնում (տեղական և | րի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ<br><br>Քաղաքացիական ծառայության գրասենյակ | վարման մարմիններ, ՔՀԿ-ներ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնոր. կազմակերպություններ) |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փաստերի ստուգման, կիբերանվտանգության, սոցիալական մեդիա հարթակներում աշխատանքի կազմակերպման վերաբերյալ վերապատաաստումների կազմակերպում:<br><br>3.5.1.4 Սահմանամերձ համայնքների ներկայացուցիչների (համայնքապետեր, վարչական ղեկավարներ, հաղորդակցության ոլորտի աշխատակիցներ) համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ արտակարգ իրավիճակներում ապատեղեկատվության դեմ պայքարի համատեքստում:<br><br>3.5.1.5 Վերապատարստման դասընթացների գնահատման մեխանիզմի ներդրում: | | | սահմանամերձ համայնքների ներկայացուցիչներ(հ ամայնքապետեր, վարչական ղեկավարներ, հաղորդակցության ոլորտի աշխատակիցներ)՝ ապատեղեկատվությ ան դեմ պայքարի գործիքակազմի, մեդիագրագիտության խթանման թեմայով: | միջազգային փորձագետների մասնակցությամբ՝ 70-30 տոկոս հարաբերակցությամ բ)՝ ըստ մակարդակների՝<br><br>- գերատեսչության ղեկավար կազմ՝ առնվազն 5 թեմատիկ դասընթաց<br>- հաղորդակցության համար պատասխանատուն եր՝ առնվազն 10 թեմատիկ դասընթաց<br>- գերատեսչության անձնակազմ՝ մեդիագրագիտությա ն և կիբերգրագիտությա ն ընդհանուր դասընթացներ՝ առնվազն 3 թեմատիկ դասընթաց:<br>Վերապատրաստվել են Լոռու/Տավուշի մարզպետարաններ ի, համայնքների հաղորդակցության ոլորտի աշխատակիցները՝ մեդիագրագիտությա ն, փաստերի ստուգման թեմայով: | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.4.2 | Մասնագիտական գիտելիքի և աշխատանքային ունակությունների կատարելագործման ապահովում: | 3.5.2.1 Մշակել պետական կառավարման մարմինների անձնակազմի կրթական և կիրառական ռեսուրսներ/ուղեցույցներ՝ (այդ թվում՝ առցանց հասանելիությամբ) ապատեղեկատվության դեմ պայքարի գործնական խորհուրդներով, փաստերի ստուգման կիրառական գործիքակազմով:<br><br>3.5.2.2 Մշակել և ընդունել պետական կառավարման մարմինների անձնակազմի համար սոցիալական մեդիա հարթակներում վարվելակերպի կանոնների և կիբերհարթակում անվտանգության կանոնների ուղեցույց:<br><br>3.5.2.3 Պետական կառավարման մարմինների անձնակազմի մոնիթորինգային կարողությունների բարելավում և համակարգում: | 2024 թ. | Մշակված և հրապարակված են կրթական և կիրառական ուղեցույցներ (այդ թվում՝ առցանց հասանելիությամբ) ապատեղեկատվության դեմ պայքարի գործնական խորհուրդներով: | Մշակվել և հրապարակվել են կրթական և կիրառական ուղեցույցներ (այդ թվում՝ առցանց հասանելիությամբ) ապատեղեկատվության դեմ պայքարի գործնական խորհուրդներով:<br><br>Մշակվել և ընդունվել է պետական կառավարման մարմինների անձնակազմի համար սոցիալական մեդիա հարթակներում վարվելակերպի կանոնների և կիբերհարթակում անվտանգության կանոնների ուղեցույց: | Թեմատիկ մշակված ուղեցույցերն ու առկա ռեսուրսները թարմացված են: | Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն ՊՈԱԿ | ՔՀԿ-ներ | Պետ. Բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ (Միջ. դոնոր. կազմակերպություններ) |